



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2024Թ. ՕԳՈՍՏՈՍԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2024թ.




2024Թ.-Ի ՕԳՈՍՏՈՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏԵՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- **Համաշխարհային տնտեսություն.** օգոստոսին ՀՀ գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության շարժընթացը պայմանավորող հիմնական գործոնը եղել է ծառայությունների ոլորտը, բացառությամբ Չինաստանի, որտեղ օգոստոսին Նավթի և պղնձի միջազգային գները հուլիսի համեմատ նվազել են, իսկ պարենի գինը՝ անփոփոխ է:
- **Տնտեսության արտաքին հատված.** օգոստոսին ներմուծման աճի տեմպը հուլիսի նկատմամբ դանդաղել է, իսկ արտահանումն արագացել: Նախորդ տարվա հուլիսի նկատմամբ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.4%-ով, իսկ եվրոյի նկատմամբ դրամը պահպանել է ապրիլից սկիզբ առած արժեզրկման միտումը՝ հուլիսին կազմելով 1.6%: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամը թեկնածու է արժեզրկման տիրույթ, կազմելով՝ 3,8%: ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է 8.4%-ով (հուլիսին արձանագրվել էր 7.1% նվազում):
- **Տնտեսության իրական հատված.** տնտեսական ակտիվության աճի տեմպը օգոստոսին կազմել է 5.6%՝ հուլիսի նկատմամբ դանդաղելով 0.6 տոկոսային կետով: 12 ամսյա գնաճը կազմել է 1.3%, միջին գնաճը -0.1%, իսկ բնականոն գնաճը՝ 0.3%:
- **Տնտեսության ֆինանսական հատված.** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ: Վարկերի ծավալների աճը կազմել է 20.6%, իսկ ավանդներին՝ 10.5%: Ավանդների տոկոսադրույքները վերջին ամիսներին ցուցաբերել են նվազման դինամիկա, մինչդեռ վարկերի տոկոսադրույքները աճել են: Կարճաժամկետ պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են նվազել դրամավարկային պայմանների շարունակական մեղմացման ազդեցությամբ:
- **Տնտեսության հարկաբյուջային հատված.** հարկային եկամուտների աճի տեմպը կազմել է 10.4%, իսկ պետական բյուջեի ծախսերը աճել են 9.9%-ով: Հունվար-օգոստոս ամիսներին պետական բյուջեն ձևավորվել է պակասուրդով՝ նախորդ տարվա հավելուրդի դիմաց:

1. Միջազգային զարգացումներ: Օգոստոս ամսին համաշխարհային տնտեսական ակտիվությունն արագացել է՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի աճով, որը «փոխհատուցել է» մշակող արդյունաբերության ոլորտի թույլ տեմպերը: Օգոստոսին ԱՄՆ-ում գրանցված տնտեսական ակտիվության աճը, հիմնականում, պայմանավորված է եղել ծառայությունների ոլորտի արագ աճով, իսկ մշակող արդյունաբերության ոլորտում գրանցվել է անկում: Երկու ոլորտներում էլ գրանցվել է զբաղվածության նվազում: Ծառայությունների ոլորտի աճով պայմանավորված՝ Եվրագոտո տնտեսական ակտիվության աճ է գրանցվել. մշակող արդյունաբերության ոլորտը շարունակում է անկում գրանցել: Մասնավորապես, աճ գրանցվել է Ֆրանսիայում, Իսպանիայում՝ պայմանավորված մասնավոր հատվածի աճով, մինչդեռ Գերմանիայում երկրորդ ամիսն անընդմեջ գրանցվել է գործարար հատվածի անկում: Օգոստոսին ՌԴ-ում գրանցվել է տնտեսական ակտիվության աճ՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի աճով: Մշակող արդյունաբերության ոլորտի աճը շարունակվում է պահպանվել, սակայն տեմպը դանդաղել է: Օգոստոսին Չինաստանի տնտեսական ակտիվության աճ է գրանցվել՝ պայմանավորված մշակող արդյունաբերության առավել արագ աճով, մինչդեռ ծառայությունների ոլորտի աճի դանդաղել է:


Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները



Օգոստոսին ԱՄՆ-ում գնաճի թուլացումը շարունակվել է՝ կազմելով 2.5% (հուլիսին՝ 2.9%)՝ պայմանավորված էներգակիրների գնանկմամբ, ինչպես նաև պարենային ապրանքների և տրանսպորտի գնաճի դանդաղմամբ: Եվրագոտոում նույնպես դիտվել է գնաճի թուլացում. գրանցվել է 2.2% գնաճ՝ պայմանավորված էներգակիրների գնաճի դանդաղմամբ և ոչ էներգակիրների գնանկմամբ. աճի ուղղությամբ հիմնականում նպաստել են ծառայությունների և սննդամթերքի գնաճի արագացումը: ՌԴ-ում գնաճի տեմպերը նախորդ ամսվա համեմատ անփոփոխ են՝ 9.1%՝ հիմնականում, պայմանավորված ծառայությունների գների աճով: Չինաստանում գրանցվել է 0.6% գնաճ՝ պայմանավորված պարենային և ոչ պարենային ապրանքների գնաճով:

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից իրականացվող զսպող քաղաքականությունն աստիճանաբար գնում է մեղմացման ուղղությամբ, բացառությամբ ՌԴ-ի: Սեպտեմբեր ամսին ԱՄՆ ԴՊՀ կողմից քաղաքականության տոկոսադրույքն իջեցվել է 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 4.75-5.0 մակարդակում, ԵԿԲ-ն հունիսի նվազեցումից հետո սեպտեմբերին քաղաքականության տոկոսադրույքը նվազեցրել է ևս 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 3.5% մակարդակում: Չինաստանի բանկը հուլիսին 3.35% սահմանելուց հետո, սեպտեմբերին ևս պահպանել է քաղաքականության տոկոսադրույքի մակարդակը՝ պայմանավորված օգոստոսին գրանցված տնտեսական ակտիվության անորոշությամբ, որն էլ իր հերթին պայմանավորված էր մշակող արդյունաբերության թույլ աճով և գործազրկության բարձր մակարդակով: ՌԴ կենտրոնական բանկը շարունակել է պահպանել դրամավարկային քաղաքականության զսպող դիրքը՝ հուլիսին բարձրացնելով հիմնական տոկոսադրույքը 2 տոկոսային կետով, այնուհետև սեպտեմբերին 1 տոկոսային կետով՝ սահմանելով 19% մակարդակում: Սա պայմանավորված էր առաջարկը գերազանցող պահանջարկով, որն էլ խթանում էր գնաճի շարունակական աճը:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարկային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում





Նավթի միջազգային գինը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 5.2%-ով, պղնձի գինը՝ 4.4%-ով և պարենի միջազգային գինը




գրեթե չի փոփոխվել նախորդ ամսվա համեմատ: Նավթի գների նվազումը պայմանավորված է եղել Չինաստանում նավթի պահանջարկի նվազմամբ և ՕՊԵԿ-ի կողմից արդյունահանման ծավալների մեծացման վերաբերյալ հայտարարությամբ: Օգոստոսին պղնձի միջազգային գնի կտրուկ անկումն առավելապես պայմանավորված է եղել առաջատար սպառող համարվող Չինաստանի պահանջարկի նվազմամբ: Պարենային ապրանքների համաշխարհային գինը նախորդ ամսվա համեմատ գրեթե փոփոխության չի ենթարկվել:

Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ




2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2024թ. օգոստոսին ներմուծման աճի տեմպը հուլիսի նկատմամբ դանդաղել է, իսկ արտահանումն արագացել: Օգոստոսին արտահանումն աճել է 58.1%-ով (նախորդ ամսվա աճը՝ 43.9%), որին ամենամեծ նպաստումն ունեցել է դեպի ԱՄԷ արտահանումը: **Ներմուծումն աճել է 18.7% (նախորդ ամսվա աճը՝ 31.1%):**

Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միջուկները, մլն դոլար




Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա 8 ամիսներին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի նվազում: Օգոստոս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազումը կազմել է 8.4%, որին ամենամեծ նպաստումն է ունեցել ՌԴ-ից այցելած զբոսաշրջիկների 13% նվազումը:

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից և այլ երկրներից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը




Շարունակվել է դրամական փոխանցումների նախորդ տարվա նվազման միտումները: 2024թ. հուլիսին ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների զուտ ներհոսքը նախորդ տարվա հուլիսի համեմատ նվազել են շուրջ 38.1%-ով՝ պայմանավորված հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 49.2% նվազմամբ:

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը օգոստոսին դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ արժեզրկվել է: Մասնավորապես՝ օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.5%-ով, ռուսական ռուբլու նկատմամբ՝ 7.8%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 1.4%-ով:

Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվության աճի տեմպը օգոստոսին կազմել է 5.6%՝ հուլիսի նկատմամբ դանդաղելով 0.6 տոկոսային կետով: Արդյունքում՝ հունվար-օգոստոսին գրանցվել է տնտեսական ակտիվության 9.0% աճ: Արդյունաբերության՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը բարձր աճի տեմպերը ապրիլ-հունիս ամիսներին կտրուկ տեմպերով դանդաղել են՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների և հիմնային մետաղների՝ արտադրության նվազմամբ: Սակայն հուլիսին նկատվել է արդյունաբերության աճի տեմպի որոշակի արագացում, որը, սակայն օգոստոսին կրկին դանդաղել է 0.1 տոկոսային կետով: Չնայած վերջին ամիսների զարգացումներին՝ հունվար-օգոստոսին արդյունաբերությունը շարունակել է հանդիսանալ ՏԱՅ-ի աճն ապահովող հիմնական ճյուղերից մեկը:

Հունվար-հուլիսի տվյալներով արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է եղել հիմնային մետաղների արտադրության աճով, շինարարության աճն ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ բնակչության և պետական բյուջեի միջոցներով


¹ 2024թ. ապրիլ ամսվա հաշվետվության ներկայացման ժամանակ ՀՀ ՎԿ-ն **ճշգրտել է նախորդ երեք ամիսների արդյունաբերության արտադրանքի ծավալների տվյալները**՝ կապված տնտեսական գործունեության տեսակների 24 (հիմնային մետաղների արտադրություն) և 32 (արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում, այդ թվում՝ ոսկերչական արտադրանքի

արտադրություն) ծածկագրերով հատվածների միջև վերադասակարգման հետ, ինչով պայմանավորված վերանայվել են նաև նախորդ երեք ամիսների արդյունաբերության ցուցանիշները:




իրականացված շինարարության աճերով (շինարարության աճը զսպող հիմնական գործոնը եղել է կազմակերպության միջոցներով իրականացվող շինարարության նվազումը), ծառայությունների աճը՝ հիմնականում ֆինանսական և ապահովագրական գործունեության աճով, իսկ առևտրի աճին հիմնականում նպաստել է մեծածախ առևտրի աճը:

Գծապատկեր 3.1. *SUS* և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)




Գծապատկեր 3.2. *SUS* և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)



Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.1%-ով՝ կազմելով 286,215 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 12.9%-ով՝ կազմելով 245,998 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 4.1%-ով՝ կազմելով 301,924 դրամ): Իրական աշխատավարձը 1.4% գնաճի պայմաններում աճել է 4.7%-ով:

Հուլիսին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 6.7%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել՝ շուրջ 4.6%-ով, կազմելով 759,079 մարդ՝ պայմանավորված հիմնականում առևտրի, կրթության, սպասարկման այլ ծառայությունների և շինարարության ոլորտներում աշխատողների թվի աճով:

Գծապատկեր 3.3. *Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)*




ՀՀ անշարժ գույքի շուկայում հուլիս ամսին գները շարունակել են աճել, չնայած աճի տեմպը հունիսի նկատմամբ դանդաղել է: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը հունիսի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -1.3-ից 1.5% շրջանակներում, իսկ նախորդ տարվա հուլիս ամսվա նկատմամբ՝ 5.9-ից 10.2% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 900,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 229,050 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը հունիսի համեմատ տատանվել է -1.7-ից 2.1% շրջանակներում, իսկ նախորդ տարվա հուլիս ամսվա նկատմամբ՝ -1.1-ից 19.8%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 446,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 26,500 դրամ):

4. Դրամավարկային քաղաքականություն: Օգոստոսին ՀՀ սպառողական շուկայում առկա է եղել թույլ գնաճային միջավայր: 12


ամսյա գնաճը կազմել է 1.3%, միջին գնաճը փոքր բացասական է՝ -0.1%, իսկ բնականոն գնաճը տևական բացասական միտումներից հետո պահպանվում է 0.3%-ի մակարդակում: Սեպտեմբերի 10-ին ՀՀ ԿԲ-ը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ սահմանելով այն 7.5%:

Գծապատկեր 4.1. *Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը (ամսական միջին)*



Օգոստոսին 12 ամսյա գնաճը պայմանավորվել է և՛ ծառայությունների (1.1 տոկոսային կետ), և՛ սննդամթերքի (0.4 տոկոսային կետ), և՛ ավիոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների (0.2 տոկոսային կետ) դրական նպաստումներով: Ոչ պարենային ապրանքների նպաստումը բացասական է՝ -0.3 տոկոսային կետ:


Գծապատկեր 4.2. *12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ*



5. Ֆինանսական միջնորդություն: Օգոստոսին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ բնորոշվելով նաև ավանդների նկատմամբ վարկերի առաջանցիկ աճով: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա նույն ամսվա, վարկերի ծավալների աճը (20.6%) գերազանցել է ավանդների ծավալների աճին (10.5%): Ընդ որում, ռեզիդենտների վարկերի աճը կազմել է 22.1%, իսկ ռեզիդենտների ավանդների աճը՝ 12.3%: Վարկերի բարձր աճը ըստ ոլորտների շարունակել է ընդգրկուն լինել. ամենաբարձր նպաստումը շարունակել են ապահովել հիփոթեքային (նպաստումը՝ 6.2 տոկոսային կետ, աճը՝ 26.2%), սպառողական (նպաստումը՝ 5.3 տոկոսային կետ, աճը՝ 22.1%) և շինարարության (նպաստումը՝ 3.8 տոկոսային կետ, աճը՝ 36.8%) վարկերը: Տնտեսության մյուս ոլորտների վարկավորումը ևս աճում է, ընդ որում՝ արդյունաբերության ոլորտի վարկերը վերջին տարիների շարունակական նվազումներից հետո սկսել են աճի դինամիկա ցուցաբերել: Առաջանցիկ վարկավորման պայմաններում ավանդների և վարկերի ծավալների դրական տարբերությունը շարունակում է նվազել՝ կազմելով 162.4 մլրդ դրամ (2022թ.-ի վերջին այդ տարբերությունը կազմել էր 913 մլրդ դրամ, 2023թ.-ի վերջին՝ 527 մլրդ դրամ): Ոչ ռեզիդենտների ավանդներն աճել են շուրջ 62 մլրդ դրամով (4.8% աճ) նախորդ տարվա նույն ամսվա, և նվազել ավելի քան 74.5 մլրդ դրամով՝ հուլիսի նկատմամբ: Ոչ ռեզիդենտների ավանդները շարունակում են պահպանվել պատմականորեն բարձր մակարդակում (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 472 մլրդ դրամով):




Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %




ՀՀ պետական պարտատոմսերի և ավանդների տոկոսադրույքները օգոստոսին որոշակի նվազել են, մինչդեռ վարկերի դեպքում նկատելի է հակառակ միտումը: Օգոստոսին, մեծապես պայմանավորված դրամավարկային պայմանների շարունակական մեղմացման ազդեցություններով, պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են: Ընդ որում, նվազումը տեղի է ունեցել եկամտաբերության կորի կարճաժամկետ հատվածում: Ավանդների տոկոսադրույքները վերջին ամիսներին ցուցաբերել են նվազման որոշակի դինամիկա: Վարկերի տոկոսադրույքները աճել են՝ կազմելով 13.4% (2023թ.-ի օգոստոսին՝ 12.3%), ինչը մեծապես պայմանավորված է մինչև մեկ տարի ժամկետով իրավաբանական անձանց վարկերի տոկոսադրույքների աճով՝ 12% (2023թ.-ի օգոստոսին՝ 11%): Հիփոթեքային և սպառողական վարկերի տոկոսադրույքները վերջին ամիսների կայուն են:

Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %



6. Հարկաբյուջետային հատված²: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը օգոստոսին որոշակիորեն արագացել է: 2024թ.-ի օգոստոսին հարկային եկամուտները կազմել են 175.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ աճելով 10.4%-ով: 2024թ.-ի հունվար-օգոստոս ամիսներին հարկային եկամուտները կազմել են 1,548.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 6.0 %-ով:


Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %



Օգոստոս ամսվա հարկային եկամուտների աճի աղբյուրները եղել են եկամտային հարկը (5.7%-ային կետ), ակցիզային հարկը (1.5%-ային կետ), ավելացված արժեքի հարկը (1.2%-ային կետ), պետական տուրքը և բնապահպանական և բնօգտագործման վճարները: Բացասական նպաստում է ունեցել մաքսատուրքը (0.4%-ային կետ): Նշենք, որ ավելացված արժեքի հարկը նախորդ ամիսների նվազման միտումներից հետո արձանագրել է աճի դինամիկա, ինչը

պայմանավորվել է հիմնականում համեմատելի ժամանակահատվածի ցածր ցուցանիշով:


Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Օգոստոս ամսին աճել են և՛ եկամուտները, և՛ ծախսերը, սակայն եկամուտների աճը առաջանցիկ է ծախսերի համեմատ: Օգոստոս ամսին պետական բյուջեի եկամուտները կազմել են 186.7 մլրդ դրամ (աճը՝ 10.3%), իսկ ծախսերը՝ 213.2 մլրդ դրամ (աճը՝ 9.9%): Ծախսերը ընդգրկել են 172.1 մլրդ դրամի ընթացիկ ծախսեր և 41.2 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ: Ընթացիկ ծախսերը նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել են 13.0%-ով, իսկ կապիտալ ծախսերը նվազել են 0.5%-ով:

2024թ.-ի հունվար-օգոստոս ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են 1,624.0 մլրդ դրամը (աճը՝ 5.5%), իսկ ծախսերը՝ 1,708.6 մլրդ դրամ (աճը՝ 16.4%):

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեն հունվար-օգոստոս ամիսներին եղել պակասուրդային: Օգոստոս ամսին ծախսերը եկամուտներին գերազանցել են 26.5 մլրդ դրամով, իսկ հունվար-օգոստոս ամիսներին 84.6 մլրդ դրամով: Նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեի հավելուրդը կազմել էր 71.6 մլրդ դրամ:

² Հարկային եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես հաշվետու, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների համար: